ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Մեղրաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձորի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-6)

Առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

ա) Իրականացնում է Մեղրաձոր համայնքի Հանքավան բնակավայրի հարկային եկամուտների հավաքագրման աշխատանքներ, ինչպես նաև դրամարկղային գործառնություն:

բ) Քարտուղարի հանձարարությամբ օրենքով սահմանված կարգով վարում է Մեղրաձոր համայնքի Հանքավան բնակավայրի զինապարտների գրանցամատյանը:

գ) իրականացնում է այլ լիազորություններ:

Առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագրով պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները.

ա) Ունի առնվազն միջնակարգ կրթություն,

բ)Ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», <<Հողի հարկի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Դրամարկղային գործառույթների մասին>>, <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա *2018 թվականի հուլիսի 20-ին, ժամը 11:00-ին,* Մեղրաձորի համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ՀՀԿոտայքի մարզ Մեղրաձոր համայնք , գյուղ Մեղրաձոր 7-րդ փողոց 2-րդ շենք, հեռ. 093337892:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ *05.07.2018թ. :*

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)
- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունվում են Մեղրաձորի համայնքապետարանի աշխատակազմում հեռ.093337892, կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնում, հեռ. 0223 2 34 13, ժամը 10oo-ից մինչև 15oo-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: